ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
CORRUPTION PREVENTION COMMISSION

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ, ԵՐԵՎԱՆ, 0009, ԿՈՐՅՈՒՆ 15, ՀԵՌ. (37412) 77 77 40
KORYUN STREET 15, 0009, YEREVAN, REPUBLIC OF ARMENIA, TEL. (37412) 77 77 40

ՈՒՂԵՑՈՒՅՑ

ԿՈՒՍԱԿՑՈՒԹՅԱՆ ՂԵԿԱՎԱՐ ՄԱՐՄՆՈՒՄ ՀԱՅՏԱՐԱՐԱՏՈՒ ՊԱՇՏՈՆԱՏԱՐ ԱՆՁԻՆ ՊԱՇՏՈՆԻ ՆՇԱՆԱԿԵԼՈՒ ԿԱՄ ՊԱՇՏՈՆԻՑ ԱԶԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎԻՆ ԾԱՆՈՒՑԵԼՈՒ

1. Սույն ուղեցույցը մշակվել է Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի (այսուհետ՝ Հանձնաժողով) կողմից՝ հիմք ընդունելով «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի» մասին օրենքի և «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքի (այսուհետ՝ Օրենք) դրույթները: Ուղեցույցի նպատակն է ուղղորդել կուսակցություններին օրենքով սահմանված իրենց պարտականությունների պատշաճ կատարման գործընթացում և ապահովել կուսակցություններից ստացված տվյալների միատեսակությունն ու ամբողջականությունը:
2. Կուսակցության ղեկավար մարմնում հայտարարատու պաշտոնատար անձինք են կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի անդամները, իսկ այլ ղեկավար մարմինների դեպքում այդ մարմնի անդամները (այսուհետ՝ հայտարարատու), որոնց վրա տարածվում է «Կուսակցությունների մասին» սահմանադրական օրենքով, ինչպես նաև «Կոռուպցիայի կանխարգելման հանձնաժողովի մասին» օրենքով սահմանված գույքի և եկամուտների հայտարարագրման պարտականությունը:
3. Հայտարարագրման համակարգը Հանձնաժողովի կողմից վարվող էլեկտրոնային համակարգ է, որտեղ զետեղված են հայտարարատուների և վերջիններիս ընտանիքի անդամների վերաբերյալ տվյալները և նրանց կողմից ներկայացված հայտարարագրերը:
4. Հայտարարատուին պաշտոնի նշանակելու կամ պաշտոնից ազատելու մասին տվյալները (այսուհետ՝ ռեեստր) անհրաժեշտ է լրացնել սույն Ուղեցույցին կցված ձևաթղթերում և համապատասխան փոփոխությունների պետական գրանցումը հավաստող քաղվածքի հետ միաժամանակ ներկայացնել Հանձնաժողով՝ էլեկտրոնային հարցումների միասնական հարթակի (www.e-request.am) կամ prties.cpcarmenia@gmail.com էլեկտրոնային փոստին ուղարկելու միջոցով:

5. Լրացված ձևաթղթերը (excel ֆորմատով) Հանձնաժողով են ուղարկվում կուսակցության մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի (եթե կուսակցության կանոնադրությամբ նախատեսված է մշտապես գործող ղեկավար մարմնի ղեկավարի պաշտոն) կամ մշտապես գործող ղեկավար մարմնի կողմից լիազորված անձի (այսուհետ՝ Կուսակցության ղեկավար) կողմից ստորագրված ուղեկցող գրության հետ մեկտեղ: Ուղեկցող գրությունը կարող է ստորագրվել ինչպես էլեկտրոնային թվային ստորագրությամբ, այնպես էլ թղթային, որի դեպքում անհրաժեշտ է կցել ստորագրված գրության սկանավորված տարբերակը: Ուղեկցող գրության մեջ նշվում է կուսակցության անվանումը, Կուսակցության ղեկավարի անունը, ազգանունը, ստորագրությունը, ինչպես նաև գրությանը կից ներկայացվող ֆայլերի, փաստաթղթերի ցանկը:
6. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրը լրացվում և Հանձնաժողովին ծանուցվում է Օրենքի 28.1 հոդվածի 4-րդ մասով սահմանված կարգով և ժամկետում (բացառությամբ առաջին անգամ), կցելով կուսակցության յուրաքանչյուր հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի ստանձնելու կամ դադարեցնելու համար հիմք հանդիսացող համապատասխան ակտի պատճենը:
7. Կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձանց ռեեստրի ձևաթղթի հղումը տեղադրված է Հանձնաժողովի պաշտոնական՝ www.cpcarmenia.am կայքում, սույն Ուղեցույցի վերջում և հասանելի է ներբեռնման համար:
8. Այն դեպքում, երբ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձը պաշտոնը դադարեցնելուց հետո նույն կուսակցության ղեկավար մարմնում ստանձնում է մեկ այլ՝ հայտարարագրման պարտականություն ունեցող պաշտոն, ռեեստրում տվալ պաշտոնատար անձի անվամբ հաջորդաբար կատարվում է երկու առանձին տողով գրառում: Առաջին տողում լրացվում են պաշտոնի դադարեցման դեպքում ռեեստրում լրացման ենթակա տվյալները, իսկ երկրորդ տողում՝ պաշտոնի ստանձնման դեպքում ռեեստրում լրացման ենթակա տվյալները:
9. Այն դեպքում, երբ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձը ստանձնում է տվյալ կուսակցության ղեկավար մարմնի կանոնադրությամբ հաստատված նոր ստեղծված պաշտոն, ապա պաշտոնի անվանումը լրացնելուց հետո փակագծերում ավելացվում է «նոր» բառը: Այն դեպքում, երբ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի դադարեցման հիմքը կանոնադրության փոփոխությունը կամ պաշտոնի վերանվանումն է, ապա նախկին պաշտոնի անվանումը լրացնելուց հետո փակագծերում ավելացվում է «Չգործող» բառը:
10. «ՊԱՇՏՈՆԻ ԱՆՎԱՆՈՒՄ» սյունակում լրացվում է կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի լրիվ անվանումը՝ ըստ տվյալ կուսակցության կանոնադրության:
11. «ԱՆՈՒՆ» «ԱԶԳԱՆՈՒՆ» «ՀԱՅՐԱՆՈՒՆ» սյունակներում լրացվում են համապատասխան տվյալները՝ կուսակցության պաշտոնատար անձի անձնագրի տվյալներին համապատասխան:
12. «ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՄԱՐԱՆԻՇ» (այսուհետ՝ ՀԾՀ) սյունակում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի ՀԾՀ-ի 10 նիշանոց ծածկագիրը կամ ՀԾՀ չստանալու մասին տեղեկանքի համարը՝ առանց որևէ ավելորդ նշումների:

13. «ԾՆՆԴՅԱՆ ԱՄՍԱԹԻՎ» սյունակում լրացվում է ծննդյան ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին հերթականությամբ՝ կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի անձնագրի տվյալներին համապատասխան:
14. «ՊԱՇՏՈՆԻ ՍՏԱՆՁՆՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ» սյունակում լրացվում է կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձի պաշտոնի նշանակման ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին հերթականությամբ, առանց որևէ ավելորդ նշումների: Այս սյունակում լրացվում է համապատասխան փոփոխությունների պետական գրանցման ամսաթիվը (պետական գրանցումը հավաստող փաստաթղթում (քաղվածքում) նշված՝ ամսաթիվը):
15. «ՊԱՇՏՈՆԻ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ԱՄՍԱԹԻՎ» սյունակում լրացվում է կուսակցության հայտարարատու պաշտոնատար անձին պաշտոնից ազատելու ամսաթիվը՝ օրը, ամիսը, տարին հերթականությամբ, առանց որևէ ավելորդ նշումների: Այս սյունակում լրացվում է համապատասխան փոփոխությունների պետական գրանցման ամսաթիվը (պետական գրանցումը հավաստող փաստաթղթում (քաղվածքում) նշված՝ ամսաթիվը):
16. «ԱՆՁՆԱԿԱՆ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՍՏԻ ՀԱՍՑԵ» սյունակում անհրաժեշտ է լրացնել անձնական օգտագործման էլեկտրոնային փոստի հասցե, որը ռեեստրում լրացնելու համար տրամադրում է հայտարարատու պաշտոնատար անձը: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ անձնական էլեկտրոնային փոստի հասցեի փոփոխության դեպքում հայտարարատու պաշտոնատար անձն իր փոփոխված տվյալները պարտավոր է մուտքագրել հայտարարագրման համակարգում: Հայտարարագրման համակարգի էլեկտրոնային փոստի հասցեի դաշտում թույլատրվում է միայն մեկ էլեկտրոնային փոստի հասցեի մուտքագրում՝ առանց որևէ ավելորդ նշումների: Հայտարարատու պաշտոնատար անձի անձնական էլեկտրոնային փոստի հասցեին Հանձնաժողովի կողմից ուղարկված գրությունները հանդիսանում են պաշտոնական, իսկ հայտարարատուն համարվում է պատշաճ ծանուցված: Հայտարարատուի կողմից տրամադրված էլեկտրոնային փոստի հասցեն սխալ կամ անվավեր լինելու կամ ծանուցումները չկարդալու բացասական հետևանքները կրում է հայտարարատու պաշտոնատար անձը:
17. «ԱՆՁՆԱԿԱՆ ԲՋՋԱՅԻՆ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ» սյունակում անհրաժեշտ է լրացնել հայտարարատու պաշտոնատար անձի միայն մեկ անձնական բջջային հեռախոսահամար, որը ռեեստրում լրացնելու համար տրամադրում է հայտարարատու պաշտոնատար անձը: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ անձնական բջջային հեռախոսահամարի փոփոխության դեպքում հայտարարատու պաշտոնատար անձն իր փոփոխված տվյալները պարտավոր է մուտքագրել հայտարարագրման համակարգում:
18. «ԱՆՁՆԱԿԱՆ ՖԻՔՍՎԱԾ ՀԵՌԱԽՈՍԱՀԱՄԱՐ» սյունակում անհրաժեշտ է լրացնել հայտարարատու պաշտոնատար անձի միայն մեկ անձնական ֆիքսված հեռախոսահամար՝ առկայության պարագայում, որը ռեեստրում լրացնելու համար տրամադրում է հայտարարատու պաշտոնատար անձը: Հայտարարատու պաշտոնատար անձի՝ անձնական ֆիքսված հեռախոսահամարի փոփոխության դեպքում հայտարարատու պաշտոնատար անձն իր փոփոխված տվյալները պարտավոր է մուտքագրել հայտարարագրման համակարգում:
19. «ՓԱՍՏԱՑԻ ԲՆԱԿՈՒԹՅԱՆ ՀԱՍՑԵ» սյունակում լրացվում է հայտարարատու պաշտոնատար անձի փաստացի բնակության հասցեն, որը ռեեստրում լրացնելու համար տրամադրում է հայտարարատու պաշտոնատար անձը: